Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 18-ի N 1346 - Ա որոշման

Վաղարշապատի մարզադաշտի և ֆուտբոլային ակադեմիայի ենթակառուցվածքների զարգացման ներդրումային ծրագիր

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Ներածություն

«ՆՈԱ» Ֆուտբոլային ակումբի և ակադեմիայի ենթակառուցվածքների զարգացման հնգամյա ներդրումային ծրագրի նպատակն է Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Մարգարա խճուղի 12 հասցեում գտնվող «Վաղարշապատ» ֆուտբոլի ակադեմիայի հիմքի վրա ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխանող սպորտային համալիր, որը կներառի՝

- ժամանակակից ֆուտբոլային մարզադաշտ
- սպորտային բազա
- ֆուտբոլային ակադեմիա

Ենթակառուցվածքների ստեղծման նպատակներն են՝

- նպաստել ֆուտբոլ խաղի զարգացմանը Հայաստանում
- ներգրավել երիտասարդ մարզիկներին՝ հնարավորություն տալով հենց իրենց երկրում ստանալ միջազգային մակարդակի սպորտային կրթություն
- հիմք ծառայել միջազգային մակարդակի ֆուտբոլային աստղերի կերտման համար

- Հայաստանում ունենալ մարզադաշտ, որը համապատասխանում է միջազգային մրցաշարերի անցկացման պահանջներին
- նպաստել Էջմիածնի համայնքի տնտեսական զարգացմանը

Տեսլական և առաքելություն

ՏԵՍԼԱԿԱՆ

«Նոա» Ֆուտբոլային Ակումբի նպատակը Հայաստանում ֆուտբոլի նորարարական և ինստիտուցիոնալ զարգացման հենակետ դառնալն է՝ ստեղծելով հստակ կառուցվածք, որը հիմնված է գիտելիքի, մասնագիտական մոտեցման և միջազգային լավագույն փորձի վրա: Մեր ակադեմիան ոչ միայն կլինի հայկական ֆուտբոլի զարգացման առանցքային կենտրոնը, այլև կմիավորի աշխարհի առաջատար մեթոդաբանությունները՝ ապահովելով բարձրակարգ կրթություն, տեխնիկական զարգացում և մրցակցային միջավայր՝ միջազգային մակարդակի ֆուտբոլային տաղանդներ ձևավորելու համար:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Մեր առաքելությունն է Հայաստանը հաստատել որպես ակումբային ֆուտբոլի միջազգային համայնքի խաղացող՝ ձևավորելով ամուր, մրցունակ և կայուն ֆուտբոլային համակարգ, որն ունակ է զարգացնելու բարձրակարգ ֆուտբոլիստներ և թիմեր: «Նոա» ՖԱ-ի ակադեմիան

կոչված է դառնալու գիտելիքի, նորարարական մարզման մեթոդների և պրոֆեսիոնալ զարգացման կենտրոն, որտեղ յուրաքանչյուր տաղանդավոր մարզիկ կունենա անհրաժեշտ պայմաններ իր ներուժը բացահայտելու, կատարելագործվելու և միջազգային ասպարեզում հաջողության հասնելու համար:

Ներդրողի մասին

«Նոա» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպությունը (պետ. գրանցման համար՝ 211.171.958171, ՀՎՀՀ՝ 02660732) (այսուհետ՝ Ակումբ) հիմնադրվել է 2017 թ. մայիսի 15-ին՝ որպես «ՖԿ Արցախ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ: 2019 թ. հունիսի 3-ին Ակումբի ընդհանուր ժողովի թիվ 1-19 որոշմամբ այն վերանվանվել է «Նոա» ֆուտբոլային ակումբ»:

2023 թ. օգոստոսին փոփոխվել է Ակումբի ղեկավարությունը: Ակումբի նոր անդամներ են դարձել Վարդգես Վարդանյանը, պրն. Վահագն Մկրտչյանը և պրն. Հարություն Վարդանյանը, իսկ Ակումբի նախկին անդամների գործառույթները դադարեցվել են: Ակումբի նոր անդամների օրոք էականորեն աճել են ֆինանսական ներդրումները, որոնք ուղղված են Ակումբի առաջին թիմի և Ակումբի ակադեմիայի զարգացմանը:

2023 թ.-ի ամռանը, Ակումբի ձեռքբերումը նշանավորեց նոր շրջանի սկիզբը: Այդ պահին թիմն ուներ ընդամենը երեք ֆուտբոլիստ, սակայն համարձակ և համակարգված տրանսֆերային ռազմավարության, ինչպես նաև անդադար աշխատանքի շնորհիվ, կարճ ժամանակում

ձևավորվեց մրցունակ թիմ, որը հաջողությունների հասավ՝ նվաճելով Հայաստանի փոխչեմպիոնի տիտղոսը՝ արդյունքում նվաճելով ՈՒԵՖԱ Կոնֆերենցիաների լիգա ուղեգիր:

Նոր ղեկավարության հետ հենց առաջին մրցաշրջանում Ակումբը զբաղեցրեց երկրորդ տեղը Հայաստանի առաջնությունում՝ ապահովելով իր տեղը ՈՒԵՖԱ Կոնֆերենցիաների լիգայում: Այս նվաճումը դարձավ նոր կառուցված թիմի առաջին մեծ քայլը միջազգային ասպարեզում: Ակումբը ցույց տվեց բացառիկ կազմակերպվածություն և պայքարելու ոգի՝ դառնալով Լիգայի պատմության միակ թիմն աշխարհում, որը հաղթահարեց որակավորման բոլոր փուլերը և դուրս եկավ Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլ: Այս արդյունքը եզակի էր նաև հայկական ֆուտբոլի պատմության մեջ:

Կատարված ֆինանսական և կազմակերպչական ներդրումների արդյունքում Ակումբն արդեն իսկ գրանցել էական հաջողություններ՝ դառնալով միակ հայկական ակումբը, որը 2024-2025 թթ. մրցաշրջանի ընթացքում անցել է Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլ:

Որպես ներդրումների իրականացման գործիք՝ Ակումբի նախագահ, Վարդգես Վարդանյանի կողմից 2023 թ. հուլիսի 12-ին հիմնադրվել է «Իմեջին Երևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ներդրող): Վերջինիս միջոցով 2023 թ. ձեռք է բերվել Վաղարշապատի ֆուտբոլի ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա):

Ներդրողն արդեն իսկ նախաձեռնել է Ակադեմիայի ենթակառուցվածքային համակարգի համալիր բարեփոխման ծրագիր, որի շրջանակներում առաջին քայլը եղել է մարզիկների

համար միջազգային մակարդակի հանդերձարանի կառուցումը և գրասենյակային տարածքների կառուցման աշխատանքների նախաձեռնումը:

2023 թ. սեպտեմբերի 5-ին Ակադեմիա է այցելել և Ակումբի զարգացման վերաբերյալ նախագահ Վարդգես Վարդանյանի հետ իր մտքերը կիսել աշխարհահռչակ ֆուտբոլիստ, «Ռեալ Մադրիդի», «Բարսելոնայի» և Պորտուգալիայի հավաքականի նախկին կիսապաշտպան Լուիշ Ֆիգուն, որը հանդես է գալիս նաև որպես Ակումբի նախագահի խորհրդական:

2024 թ. տարեսկզբին Ակադեմիային են միացել նաև պորտուգալական «Սպորտինգ» ակումբի նախկին աշխատակիցներ՝ ֆուտբոլի զարգացման և հավաքագրման չորս միջազգային մասնագետներ՝ զարգացնելու մանկապատանեկան ֆուտբոլը:

Հիմնական նպատակներ

Ներդրումային ծրագրի հիմնական նպատակներն են՝

- խթանել Հայաստանի Հանրապետությունում երիտասարդ տաղանդի հայտնաբերումը և հետևողական զարգացումը ողջ սպորտային կենսացիկլի ընթացքում՝ կերտելով միջազգային մակարդակի առաջնակարգ մարզիկներ
- հասնել սպորտի՝ որպես մասնագիտության զանգվածայնացմանը,
- բարձրացնել Հայաստանում ակումբային ֆուտբոլի նշաձողը և սեփական օրինակով խթանել դրա շարունակական զարգացումը

- գրանցել նշանակալի ձեռքբերումներ ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային մրցաշարերում
- նախապայմաններ ստեղծել և աճեցնել բարձր մասնագիտական հմտություններով օժտված պրոֆեսիոնալ մարզիկներ, ովքեր Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ազգային հավաքականը կհասցնեն նոր, դեռևս երբևէ չգերազանցված բարձունքների
- Հայաստանում ունենալ միջազգային մրցաշարերի անցկացմանը հարիր մարզադաշտ

Երկրորդային նպատակներ

Ներդրումային ծրագրի ածանցյալ նպատակներն են՝

- Ծրագրի շրջանակներում նախատեսվող համապարփակ, ժամանակակից և միջազգային լավագույն փորձին ու չափորոշիչներին համապատասխանող սպորտային համալիրը լինելու է իր տեսակի մեջ առաջինը ՀՀ-ում և օրինակելի ողջ տարածաշրջանում, ինչը, բացի Հայաստանի Հանրապետությունում սպորտի զարգացմանն ու խթանմանն ուղղված նպատակին ծառայելուց, նաև կամրապնդելու է ՀՀ դերը և կարևորությունը տարածաշրջանի սպորտային էկոհամակարգում
- Նման համալիրի ստեղծումը ՀՀ Արմավիրի մարզում զգալիորեն կնպաստի մերձակա համայնքների տնտեսության խթանմանը՝ նոր աշխատատեղերի ստեղծման և սպորտային տուրիզմի զարգացման միջոցով

- Ենթակառուցվածքների արդեն իսկ կառուցման և շահագործման ընթացքում պետական և համայնքային բյուջե վճարվող հարկերի ու տուրքերի ավելացում

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐ

Ներդրումային ծրագիրը բաղկացած է երկու հիմնական փուլերից՝

- **Փուլ 1** – Մարգարա խճուղի 12 հասցեում գտնվող ֆուտբոլի ակադեմիայի առկա մարզական ենթակառուցվածքների վերակառուցում, արդիականացում և համապատասխանեցում միջազգային լավագույն չափորոշիչներին (2024-2030 թթ.):
- **Փուլ 2** – «Վաղարշապատ» ֆուտբոլային ակադեմիայում և հարևանությամբ տեղակայված ներդրումային ծրագրով ներկայացված հողակտորի վրա ֆուտբոլային ակադեմիայի և մարզադաշտի կառուցում՝ իրենց հարակից և օժանդակ հանգույցներով և ենթակառուցվածքներով (2025-2030 թթ.)

ՓՈՒԼ 1

Տարածք՝ Մարգարա խճուղի 12

Աշխատանքների ծավալ՝ «Վաղարշապատ» ֆուտբոլի ակադեմիայի առկա մարզական ենթակառուցվածքների վերակառուցում, արդիականացում և համապատասխանեցում միջազգային լավագույն չափորոշիչներին:

Ժամանակացույց՝ Փուլ 1-ի աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին և ավարտին կհասցվեն 2030 թվականին:

Իրականացվող աշխատանքներ

- Առկա վարչամարզական շենքի արդիականացում
- Նոր՝ շուրջ **5000 քմ մակերեսով** վարչամարզական շենքի կառուցում, որը ներառելու է մարզական, բուժական և վերականգնողական, սննդի և հանգստի կազմակերպման, վարչական և գրասենյակային բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները
- Ակադեմիայի տարածքում առկա **4 ֆուտբոլային դաշտից** երկուսի հիմնարար բարեկարգում, իսկ երկու դաշտի կառուցում՝ հիմքից
- Դաշտերի համար բարձրակարգ սպորտային լուսավորության համակարգի տեղադրում

ՓՈՒԼ 2

Տարածք՝ Մարգարա խճուղի 12 հասցեի անմիջական հարևանությամբ գտնվող, ձեռքբերման ենթակա 23.84051 հա **հողատարածք** և առկա հողատարածք:

Աշխատանքների ծավալ՝ Վերոնշյալ հողատարածքում մանկապատանեկան ֆուտբոլային ակադեմիայի և մարզադաշտի կառուցում՝ իրենց հարակից և օժանդակ հանգույցներով ու ենթակառուցվածքներով

Ժամանակացույց՝ 2025-2030 թթ.

Ծրագրի փուլերն իրականացվելու են զուգահեռ:

Իրականացվող աշխատանքներ

- Մանկապատանեկան ֆուտբոլային ակադեմիայի շենքի կառուցում
- Ակադեմիային կից սպորտային բազայի կառուցում՝ խաղադաշտերով և բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով
- Մարզադաշտի կառուցում
- Մարզադաշտին օժանդակ և կից սննդի ու ժամանցի ապահովման հանգույցների, տարողունակ ավտոկայանատեղիի և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցում:

Աշխատանքների համար անհրաժեշտ հողատարածք

Նախագծային թիմի գնահատմամբ՝ վերոնշյալ համալիրի կառուցման համար պահանջվելու է շուրջ **23.84051 հա հողատարածք**: Հետևաբար, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ

նախապայման է **«Վաղարշապատ» ակադեմիային հարակից համայնքային 23.84051 հա հողակտորի ձեռքբերումը Ներդրողի կողմից**:

Բոլոր ենթակառուցվածքների և հանգույցների բարեկարգման ու նախագծման աշխատանքներում ներգրավված են միջազգային լավագույն փորձը կրող մասնագետներ և խորհրդատուներ, մասնավորապես՝

- **Aspire Sports Turf (AST)**՝ Կատար
- **STRI Group**՝ լաբորատոր-նախագծային ընկերություն, Մեծ Բրիտանիա
- **Edel Grass**՝ ՖԻՖԱ-ի կողմից հավատարմագրված արհեստական խոտածածկով դաշտերի նախագծող-մատակարար, Նիդերլանդներ
- **Philips Lighting**
- **Ավագ տեխնիկական փորձագետ-խորհրդատու**՝ Կատարի ֆուտբոլի ասոցիացիա

ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով **«Իմեջին Երևան»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը **Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից** ձեռք է բերել Մարգարա խճուղի 12 հասցեում գտնվող **«Վաղարշապատ» ֆուտբոլի ակադեմիային** պատկանող գույքը, որը անմիջապես սահմանակցում է ծրագրով ներկայացված **23.84051 հա հողակտորի** հետ:

Միավորելով վերոնշյալ գույքը և ներդրումային ծրագրով ձեռք բերվող հողակտորը՝ Ներդրողը կկարողանա կառուցել ամբողջ ենթակառուցվածքը և շինությունները, այդ թվում՝ **մարզադաշտ, դաշտեր, վարչական շինություններ, հարյուրավոր մեքենաների համար նախատեսված կայանատեղիներ**, առանց որոնց անհնար կլինի ակադեմիայի բնականոն գործունեությունը:

«Նոա» ՖԱ հիմնական առաքելությունն է ձևավորել եվրոպական մակարդակով մրցունակ թիմ, որը կշարունակի կայուն զարգանալ և հաջողություններ գրանցել միջազգային ասպարեզում: Այս ռազմավարության առանցքը կազմում են երկու հիմնական ուղղություններ՝ փորձառու արտասահմանցի ֆուտբոլիստների ներգրավումը և «Նոայի» ակադեմիայի սաների զարգացումը, ովքեր կդառնան Հայաստանի ազգային հավաքականի առանցքը: Ակումբը նպատակ ունի մշտապես ներկայություն ունենալ ՈւԵՖԱ-ի մրցաշարերում:

Տեսլականն ընդգրկում է նաև ավելի մեծ նպատակ՝ առաջիկա 15 տարիներին Հայաստանի հավաքականը պետք է դառնա աշխարհի լավագույն չորս հավաքականներից մեկը: Չնայած

այս նպատակը կարող է թվալ չափազանց հավակնոտ, սակայն այն հիմնված է հստակ մշակված ռազմավարության, երկարաժամկետ հանձնառության, համակարգային բարեփոխումների և ռեսուրսների նպատակային օգտագործման վրա:

Այս ամբողջ տեսլականի առանցքում գտնվում են **որակյալ ենթակառուցվածքները**, որոնք ապահովում են ճիշտ և պրոֆեսիոնալ միջավայր ֆուտբոլիստների զարգացման համար: Բարձրակարգ մարզումային բազաներ, ժամանակակից վերականգնողական կենտրոններ, նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ակադեմիա և հարմարավետ խաղադաշտեր՝ սա այն հիմքն է, որի վրա կառուցվում է ակումբի ապագան:

Այժմ ուշադրությունը կենտրոնացած է այս խաղացողներին զարգացնելու վրա, որպեսզի նրանք դառնան.

1. «Նոա» ՖԱ-ի հիմնական թիմի առանցքը
2. Հայաստանի ազգային հավաքականի հիմնական խաղացողները
3. Հայկական ֆուտբոլի դեսպանները միջազգային ասպարեզում
4. Եկամտի աղբյուր՝ տաղանդների ներդրումների միջոցով

«Նոա» ՖԱ-ն ստեղծում է **էլիտար ակադեմիա**, որը կունենա սաներ՝ ապահովելով Հայաստանի լավագույն երիտասարդների զարգացման համար անհրաժեշտ պայմաններ: Այս ծրագիրը հնարավորություն կտա բացահայտելու և զարգացնելու նոր սերնդի ֆուտբոլային

տաղանդները՝ նրանց համար ստեղծելով հստակ ճանապարհ դեպի պրոֆեսիոնալիզմ և միջազգային մրցունակություն:

Այս մոտեցումը, զուգակցված **բարձրակարգ ենթակառուցվածքների** ստեղծմամբ, ոչ միայն բարձրացնելու է հայկական ակումբային ֆուտբոլի մակարդակը, այլև ամրապնդելու է ազգային հավաքականի դիրքերը միջազգային ասպարեզում՝ ստեղծելով ամուր հիմք հայկական ֆուտբոլի կայուն զարգացման համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է, ներդրումային ծրագրի առաջնային նպատակը շահույթի հետապնդումը չէ: Այն ավելի լայն ռազմավարական նպատակներով առաջ շարժվող ծրագիր է:

Ներդրումային ծրագրի ընթացքում նախատեսվում է կատարել ընդհանուր մոտ 7.002 մլրդ ՀՀ դրամ ներդրում երկու փուլով:
Ներդրման արդյունքում ստեղծվելու է տարածաշրջանում առաջատար ֆուտբոլի բազա՝ հիմնված լավագույն փորձի վրա: Հնարավորություն է ընձեռվելու սպասարկել 500 հոգանոց մանկապատանեկան ակադեմիա, որի զարգացման պատասխանատուներն արդեն հրավիրված են և արդեն մեկ տարի է զբաղվում են ակադեմիայի երկարաժամկետ զարգացման ռազմավարության ու ֆուտբոլիստի կրթման մեթոդաբանության վրա՝ հաշվի առնելով Հայաստանյան մշակույթի առանձնահատկությունները:

Համալիրի կառուցման շնորհիվ ստեղծվելու են աշխատատեղեր՝ նպաստելով մարզային գործազրկության կրճատմանը և համայնքում ֆուտբոլի ու սպորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը:

Իրականացվելու է մարզադաշտի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և համապատասխանեցում միջազգային պահանջներին, ինչպես նաև կառույցի կողմից սերտիֆիկացում՝ գործընթացին մասնակից դարձնելով միջազգային փորձառու խորհրդատուների, ովքեր կառուցել են 2022թ Քաթարում տեղի ունեցած ֆուտբոլի աշխարհի առաջնության համար նախատեսված ստադիոններն ու մարզադաշտերը:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

***Ինչպես երևում է աղյուսակից, այս ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում է ներդնել առնվազն 7,002 միլիարդ դրամ: Ներդրումները կուղղվեն ինչպես մեր սեփականություն հանդիսացող՝ Մարգարա խճուղի 12 հասցեում գտնվող 5,5601 հա տարածքով համալիրի, այնպես էլ ձեռք բերվելիք 23.84051 հա տարածքի զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատանքները և աղյուսակի տողերը կարող են փոփոխվել՝ ելնելով ակումբի առաջնահերթություններից ու կարիքներից, ինչպես նաև կախված ճարտարապետական նախագծերից և պետական մարմինների համապատասխան թույլտվություններից, ինչը, սակայն, չի կարող նվազեցնել ներդրումների ծավալը: Նվազագույնն այն ծավալի ներդրումն արդեն երաշխավորված է մեր կողմից, և այն նախատեսվում է ծախսել մինչև 2030 թվականը:**

Ներդրումային ծրագրի անվանում	**2024-2025**	**2026**	**2027**	**2028**	**2029**	**2030**	**Ներդրման գումար հազար ՀՀ դրամ**
Խաղադաշտի կառուցում	-	250 000	250 000	-	-		500 000
Բնական խոտածածկով ուժային դաշտի կառուցում	80 000	-	-	-	-		80 000
ՀՖՖ ստանդարտներին համապատասխան խաղային մարզադաշտի կահավորում	-	40 000	-	-	-		40 000

Խաղադաշտերի սպասարկման համար առաջավոր սարք–սարքավորումների գնում	120 000	60 000	60 000	50 000	100 000	160 000	550 000
Ավտոբուսների և մարզումային գույքի գնում		40 000	60 000	80 000			180 000
Տարածքի ընդհանուր բարեկարգում և սալիկապատում	-	105 000	90 000	105 000	150 000		450 000
Սերվիս կենտրոնի կառուցում 1250 քմ նախատեսված դաշտերի սպասարկման տեխնիկայի կայանման և մեխանիկական սպասարկման համար, ինչպես նաև պարարտանյութերի ու սերմերի պահեստավորման	60 000	100 000	80 000	-	-		240 000

Տեխնիկական շենքի կառուցում 280 քմ՝ նախատեսված միզաջգային ստանդարտներին համապատասխան դաշտերի ոռոգման պոմպակայանի և ավազանի, ինչպես նաև կաթսայատան սարքավորումների տեղակայման և սպասարկման համար	40 000	160 000	80 000	40 000	-		320 000
Էլեկտրական ենթակայանի համար նախատեսված շինության կառուցում	-	40 000	-	-	-		40 000
Մարզադաշտերի շուրջ 6 մ բարձրության ցինկապատ թիթեղյա ցանկապատի գնում և տեղադրում	60 000	60 000	60 000	60 000	20 000	40 000	300 000
Գործող ակադեմիայի շենքի վերակառուցում և վերազինում	40 000	150 000	90 000	70 000			350 000
Ծնողների համար առանձնացված սպասասրահի կառուցում և կահավորում	30 000	12 000	-				42 000
Ակադեմիայի նոր շենքի կառուցում և կահավորում	640 000	570 000	640 000	400 000	220 000		
Այդ թվում							

Շենքի կառուցման աշխատանքներ	240 000	105 000	330 000	220 000	160 000		1 055 000
Մարզասրահի կառուցում և կահավորում	150 000	100 000	-	-	-		250 000
Թաց շոգեբաղնիքի կառուցում	-	25 000	-	-	-		25 000
Չոր շոգեբաղնիքի կառուցում	-	30 000	-	-	-		30 000
Միջազգային ստանդարտներին համապատասխան տաք–սառը (Կոնտրաստ) ավազանների կառուցում	40 000	-	-	-	-		40 000
Հյուրանոցային 21 հատ համարի կառուցում և կահավորում	80 000	70 000		-	-		150 000
Կոնֆերանս 2 դահլիճի կառուցում և կահավորում	-	-	70 000	100 000	-		170 000
Միջազգային լավագույն փորձի հիման վրա հանդերձարանի կառուցում և կահավորում	80 000	50 000	20 000	-	-		150 000
Ֆիզիոթերապիայի և մերսումների սենյակների կառուցում և կահավորում	50 000	90 000	120 000	-	-		260 000
Ճաշարանի կառուցում և կահավորում	-	80 000	30 000	20 000	-		130 000

Գրասենյակների կառուցում և կահավորում 120 հոգու համար	-	20 000	70 000	60 000	60 000		210 000
Խաղադաշտերի կառուցման նախագծի մշակում			50 000	50 000	50 000		150 000
Խաղադաշտերի միջազգային ստանդարտներին համապատասխանեցում և սերտիֆիկացում	-	40 000	-	-	-		40 000
Միջազգային խորհրդատուների ներգրավում կառուցման պլանի կազմման և աշխատանքների իրականացման համար		30 000	40 000	40 000	30 000	30 000	170 000
Խաղադաշտերի կառուցման աշխատանքների սկիզբ	-	-	-	-	530 000	550 000	1 080 000
Ընդամենը Ներդրում	**1 070 000**	**1 657 000**	**1 500 000**	**895 000**	**1 100 000**	**780 000**	**7 002 000**

Վերը բերված ներդրումները կհանգեցնեն նաև բյուջետային մուտքերի: Բացվածքը՝ ստորև

Տարեթիվ	ԱԱՀ	Ոչ ռեզիդենտի շահութահարկ	Եկամտային հարկ	Մաքսատուրք ֆ մաքսավճար	Ընդամենը
2025	124 000	8 000	50 000	62 000	244 000
2026	193 400	6 000	50 000	96 700	346 100
2027	114 000	8 000	50 000	57 000	229 000
2028	54 000	8 000	100 000	27 000	189 000
2029	36 000	6 000	100 000	18 000	160 000
2030	40 000	6 000	100 000	20 000	166 000
Ընդամենը	561 400	42 000	450 000	280 700	1 334 100

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ինչպես արդեն նշվեց, Ներդրողը ծրագրի իրականացումը չի պայմանավորում ակնկալվող շահույթի հետ: Այս տեսանկյունից **շահույթ չգեներացնելը չի հանդիսանում ռիսկ ծրագրի իրականացման համար**, այն իր բնույթով հանրային նշանակության և հանրօգուտ է:

Ծրագրի իրականացման համար **ելակետային խնդիրը և ռիսկը** հնարավորինս **սեղմ ժամկետներում համայնքային 23.84051 հա հողակտորի ձեռքբերումն է**, առանց որի հնարավոր չի լինի՝

- սկսել նախագծային աշխատանքները,
- կատարել ներդրումային ծրագրի բյուջեի վերջնական գնահատումը,
- կառուցել սպորտային համալիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկայացվում է նախնական **SWOT վերլուծություն**:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Ռիսկեր
Ֆինանսական միջոցների առկայություն	Տեղական փորձի բացակայություն և օտարերկրյա մասնագետներից կախվածություն (և՛ շինարարության, և՛	Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում	Համալիրի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի ձեռքբերման հետ կապված խնդիրներ

	ակադեմիայի զարգացման տեսանկյունից)		
Ժամանակակից ֆուտբոլի մարզադաշտ և ակադեմիա		Հարկային մուտքեր համայնքային և պետական բյուջե	Պետության հարկային քաղաքականության փոփոխում
Հայկական ֆուտբոլի զարգացման խթանում		Ներդրողի մասնակցությունը համայնքի սոցիալական ծրագրերում	
Պատանիների համար սպորտային կարիերա ստեղծելու պայմանների ապահովում		Նոր աշխատատեղերի ստեղծում	
Սպորտային տուրիզմի զարգացում			
Ընդհանուր ենթակառուցվածքների զարգացում			

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատատեղեր

Ներդրումային ծրագրի իրագործման փուլում նախատեսվում է ստեղծել **լրացուցիչ 100 աշխատատեղ**, որոնց միջին ամսական աշխատավարձը կկազմի **380,000 ՀՀ դրամ**, ներառյալ բոլոր պետական հարկերը:

Մարզադաշտի կառուցման ավարտից հետո նույնպես ստեղծվելու են **լրացուցիչ աշխատատեղեր**, որոնք ապահովելու են Ակադեմիայի, մարզադաշտի և Ակումբի ընդլայնված կառույցների սպասարկումը: Սպասարկող անձնակազմում կներառվեն.

- **բժշկական անձնակազմ**,
- **սպասարկող անձնակազմ**,
- **վարչական անձնակազմ**,
- **մարզչական անձնակազմ**,
- **հավաքագրող և ՄՌԿ (մարդկային ռեսուրսների կառավարման) անձնակազմ**,
- **մարզիկներ**:

Մանկապատանեկան սպորտի զարգացում

Ակադեմիայի ստեղծումը և հարակից բնակավայրերի երեխաների ներգրավումը մանկապատանեկան սպորտի զարգացմանը **դրական ազդեցություն կունենան առողջ ապրելակերպի տարածման և սպորտային կարգապահության սերմանման վրա**: Այս ծրագիրը կստեղծի **մասնագիտական կայացման հնարավորություն հեռանկարային մարզիկների համար**:

Հարակից բնակավայրերի տնտեսական ակտիվության խթանում

ՀՀ Արմավիրի մարզում սպորտային նշանակության նման համալիրի տեղակայումը կունենա ոչ միայն **աննախադեպ սպորտային**, այլև **տնտեսական դրական ազդեցություն**:

Այս մասշտաբային կառույցի ստեղծումը, որն առաջինն է լինելու **անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ**, շղթայական ազդեցությամբ նպաստելու է հետևյալ ոլորտների **արագ զարգացմանը**.

- հանրային սննդի ոլորտ,
- հագուստի արտադրություն և վաճառք,
- հյուրանոցային տնտեսություն,
- այլ ենթակառուցվածքներ, որոնք անմիջականորեն կապ կունենան համալիրի գործունեության հետ:

Այս ծրագրի միջոցով մարզում կխթանվի տնտեսական ակտիվությունը՝ ապահովելով **նոր բիզնես հնարավորություններ և աշխատատեղեր**:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

23.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ